

ՅԵԿ. ԱԳԱՐՈՐ

ԾՈՒԼՈՒԹԵԱՆ

ՊԱՏՃԱՌԸ

Մանկական փոքրիկ 2 դարձ.

Գիրք 10 կողմ.

891 995

Ա - 43

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆակտիկա փող.

1912

891.542-93-2 UZUFUF. 2. 1006
29369

2-43 ԾՈՒԼՈՒԹԵԱՆ.

முதுகு

274	11/242	
274	26/242	
457	20/257	
209	16/169	17/169

N 75

2011-05

891.994

W-43

ՅԵԿ. ԱՂԵՐԵՐ

uγ

10.

ԾՈՒԼՈՒԹԵԱՆ Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

Գրված է զուգորդությամբ
16րդ դար. N 166 1006
29369

Մանկական փողեիկ 2 գործ.

5
41



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐՆԵՐԻ
Библиотека-читальня

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆակայեա փող.

1912

6374
-5 FEB 2013

ԾՈՒԼՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Մանկական վոդեիլ երկու գործողութեամբ

Գործող անձինք

Տիկ. ՓԱՌԱՆՁԵՄ, 25 տարեկան.

ՍՐԲՈՒՀԻ, սրա աղջիկը, 10 տ. III պատ. աշակերտուհի:

ՇԱՀԷՆ, նրա որդին, 12 տ. IV պ. աշ.

ԳԻՔՈՐ, սրանց ծառան, 17 տարեկան.

ՍՕՍ, Շահէնի ընկերը, 11 տարեկ.

ՅԱՍՄԻԿ, 9 տ. } Սրբուհու ընկերուհիները

ՎԱՐԴԱՆՈՒՇ, 10 տ. } Հ. ծ. դ. III պ. աշակ.

Պ. ՄԻՆԱՍԵԱՆ, ուսուցիչ ծխ. դպ. (փոքրիկ մորուքով
և ակնոցով):

Անցքը պատահում է զաւառական քաղաքում:

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը ներկայացնում է՝ մաքուր կահավորած սենեակ. մի կողմը դրած է սեղան՝ մանուկների գրութեան և սերտողութեան համար: Պատերը դարդարած են նկարներով, մի կողմը կախած է պատի օրացոյց: Վարագոյրը բացւելիս՝ Դիքորը, յատակի չոթքը ձեռքին, սենեակը մաքրում է ու խօսում.

Տ Ե Ս Ի Լ 1.

Գ ի ֆ ո ռ

ԳԻՔ.— Չահլէս գնացել ա, Աստուած վկայ, էլ դնջութիւն չունեմ էս երեխանց ձեռին... Մի-թամ ուսումնարանի աշակերտներ են. (գետնից պատառոտած թղթեր հաւաքելով) Հալա սրանց մտիկ արէք, ախր կարթացածներն էլ հրն ա, որ էս էլ ճղել ու ճղատել են: Բա ափսոս չէն էս նախշուն պատկերները: Հաւատացէք, երէկ թէ մէկէլ օրն էր՝ որ աղջիկ-պարունս ծընգ-ծընգան արասիք համբարեց սրանց համար, համա հմիկ՝ ոտի տակ են տւած: (գլուխը շարժելով) Օ... թէ աղէս ըստի կըլի, նա գիտայ, թէ սրանց կաշ-ւին մնց աղ կանի, համա՛ դէ որ ըստեղ չի... (մաքրելով) Հա դէ, ջահանդամը սրանց գլուխը, թէկուզ սաղ տունն էլ աւերակ անեն, ինձանից ինչ ա գնում: Էս ա, էս ցաք ու ցրիւ տալն ա ինձ նեղացնում, թէ չէ... (կռնով է եւ նստա-

րանի տակից թղթի կտորներ հաւաքում): Հա-լա մտիկ արէք, Աստուած սիրէք, հալա մի տե-սէք թէ էս զիբիլը որտեղ են ածել... Կասես որ պատուում, էս ու էն քունջն են լցնում՝ էլ հան-ւելու չի: Թիւհ, էն Աստօծը, օրական հինգ վեց հետ աւլում, թամզում եմ, էլի չեմ կարողանում տունը խտակ պահել: Էս փէտակտորն էլ ձեռս են տւել (ցոյց տալով չոթքը) թէ սրանով թամ-զի. բա սրանով բան կըլի: (ըստից զանգի ձայն) Ըհը՛, հրէս եկան իմ ջանի համար: Հրէս տուն կը մտնեն, մի երկու ալալօս-գալալօս կանեն, մի երկու էլ՝ խզի-բզի ու պըծաւ, թուղթ ա, որ կը պատռատորեն ու էս ու էն քունջը կը լցնեն... (Երկրորդ անգամ զանգի ձայն) Ինչ ուզում ա ըլի, (դէպի դուռը) որ մեռնէք՝ բաց անողը չեմ... թէ որ կը հարցնեն՝ ես զիդամ ինչ պատասխան կտամ: (Դարձեալ զանգ) Օ՛, հօ, հօ, էն են զար-բին գնդացնում հա՛... Շատ հարկաւորս ա, ամեն օր ես չբացանեմ, թող մի հետ էլ ուրիշը բաց անի... (Լսում է չորրորդ անգամ զանգի ձայն, Դիքորն էս անգամ կիսով չափ թախտի տակն է մտնում, որպէս թէ մաքրում է. ներս է գալի Փա-ռանձեմը):

Տ Ե Ս Ի Լ 2.

Նա եւ փիկ. Փառանձեմ

ՓԱՌԱՆ. — (Չայրացած) Ա՛յ տղայ, զանգի

ձայնն ականջդ չի մտնում: (նկատելով Գիքորին)
Այ քեզ նորութիւն: Այդ ուր ես մտել:

ԳԻՔ.—(Թախտի տակից դուրս գալով) Ըստի
եմ, աղջիկ պարոն, ըստի եմ...

ՓԱՌԱՆ.—Ինչո՞ւ դուռը բաց չարիր, միթէ
այդ էլ իմ պարտականութիւնն է:

ԳԻՔ.—Աղջիկ պարոն, բա՛ թախտի տակե-
րին զանգակի ձէն կիմացւի, որ ես իմանամ:

ՓԱՌԱՆ.—Ի՞նչ էիր անում այնտեղ:

ԳԻՔ.—Դէ՛ հնց անեմ, էս երեխէքը կասես
իմ ինադու են զիր-զիբիլը քունջ ու պուճախ ա-
ծում. ընդիարէնք չիթկով աււում չի, ձեռնե-
րով եմ հաւաքում էս թղթակտորները:

ՓԱՌ.—Ինչպէ՛ս թէ աւել չի վիում...
(Չոթքը ձեռքիցն առնելով ցոյց է տալիս նրան).
Ահա, այսպէս արա՛, վերջացաւ գնաց... Եբա
մա՛րդ, սրանով քեզ հարիւր անգամ ցոյց եմ տւել
և դու դեռ չկարողացար սովորել. ի՞նչ մի դժ-
ւար բան է:

ԳԻՔ.—Դժարը՝ դժար չի, աղջիկ պարոն,
համա դէ որ ձեռիս ցախաւիլ ըլի՝ աւելի շուտ
կաււեմ:

ՓԱՌ.—Օհօ, այդ էր պակաս քեզ:

ԳԻՔ.—Բա ի՞նչ, ցախաւիլ չըլի, որ մի
սհաթումը աջ ու ձախ անեմ՝ դրադ կենամ, ի՞նչ

լազաթ: Ախր, էս չիթք ա, ինչ պատիժ ա, բա
սրանով տուն կաւրլի՞:

ՓԱՌ.—Լաւ, լաւ. շատ մի խօսի. գնա՛ խո-
հանոց, աղախինը ինչ ասի կը կատարես: Ահա
երեխաները դբօսանքից կը գան և սուրճ կուգեն:

ԳԻՔ.—Աչքիս վրայ, աղջիկ պարոն. (շտա-
պում է գնալ, ոտքը յանկարծ դնում է չոթքի
տափակ ծայրերից մէկի վրայ եւ երկար կոթը
կաշում է ծակատին). Վայ՛ նանի ճակատս, վայ...
այ քանդւես ի՞նչ փեշակ ես հա՛: (ուզում է գնալ):

ՓԱՌ.—Սպասիր Գիքոր, սպասիր, տեսնեմ
ճակատդ հօ չմասուեց...

ԳԻՔ.—Սպասս ո՞րն ա, աղջիկ պարոն, դէ
որ ձեռիս ցախաւիլ ըլէր, ըսէնց բան հօ չէր
պատահի: (ձեռքը ծակատին քսելով դուրս է գը-
նում):

Տ Ե Ս Ի Լ 3.

Փառանձեմ (մենակ)

ՓԱՌ.—Օհ, անպիտան ծառայ, ինչպէ՛ս վա-
խեցայ, յանկարծ ճակատը պատուէր՝ էլ ձեռքիցը
չէինք կարող ազատուել: (Պատունանից դուրս
նայելով) Ի՞նչու ուշացան մեր փոքրերը, չլինի
թէ ընկերների մօտ են գնացել. բայց չէ՛ որ
սովորաբար նրանք են մեզ մօտ գալիս: Երանի
դան և մերոնց ուրախացնեն, մանաւանդ աղջ-

կանս: Երեք օր է՝ տկարութեան պատճառով զբա-
րոց չէ գնում և առաջանից աւելի մաշել է:
(ներս են մտնում Սրբուհին եւ Շահէնը):

ՏԵՍԻԼ 4.

Նա, Սրբուհի եւ Շահէն

ՍՐԲ.—Բարև, մայրիկ ջան, (շամքուրելով)
շատ հօ չուշացանք:

ՓԱՌ.—Հապա ի՞նչ արիք, հոգիս. գուցէ կու-
գէիր վաղը զպրոց գնալ, չէ որ դասեր ունես
սովորելու:

ՇԱՀ.—Ես իմ դասերը՝ համարեա թէ գի-
տեմ, քեռին ասաւ, որ եթէ մէկ էլ կրկնեմ՝ ար-
դէն անգիր կիմանամ:

ՍՐԲ.—Ես էլ գիտեմ իմ դասերը:

ՓԱՌ.—Հո՛, աւելի լաւ, էլ չես չարչարւի:

ՇԱՀ.—Սուտ է ասում, մայրիկ, ոչինչ էլ
չգիտէ: Ճանապարհին գանգատում էր՝ որ դա-
սերը դժւար են և չի կարողանում սովորել, հէնց
այդ պատճառով էլ՝ սուտ պկար...

ՍՐԲ.—(Երա խօսքը կտրելով) Ինքն է սուտ
ասում մայրիկ. (Շահէնին) ամբողջ օրը ինձ հետ
ես եղել, էլ երբ պատրաստեցիր դասերդ:

ՇԱՀ.—Ես իմ դասերը սովորում եմ այն
ժամանակ, երբ դասարանում ուսուցիչը պատ-

մում է: Հարցրէք քեռուց, նա այդ բանը լաւ է
իմանում:

ՓԱՌ.—Լաւ, լաւ, իզուր տեղը միք վիճի:
Մի փոքր հանգստացէք, ես կերթամ՝ սուրճ կը-
պատրաստեմ ձեզ համար, սուրճից յետոյ կը մը-
տածէք ձեր անելիքի մասին (գնում է):

Տ Ե Ս Ի Լ 5.

Սրբուհի եւ Շահէն

ՍՐԲ.—(մօտենում է պատի օրացոյցին եւ
շուտ-շուտ թերթում): Օ՛հ, էս անպիտան կար-
միրներն ո՛ւր են կորել. էս ինչո՛ւ տօն չկայ է՛:

ՇԱՀ.—Ծոյերի համար՝ ամեն օր էլ տօն է:

ՍՐԲ.—Դու ես ծոյր:

ՇԱՀ.—Հազիր դու ես: Երեք օր է զպրոց
չես գնում՝ ինչ որ սուտ ու մուտ հիւանդու-
թեան պատճառով:

ՍՐԲ.—Սպասիր մայրիկը գայ, տես ի՞նչեր
եմ ասում քո մասին:

ՇԱՀ.—Ի՞նչ պիտի ասես, յանկարծ միաւո-
րովս և երկուսներովս չվախեցնես:

ՍՐԲ.—Է՛լի: Հա, ասենք թէ վատ թւանշան-
ներ չունես, այդ հօ չի նշանակում, թէ դու լաւ
աշակերտ ես:

ՇԱՀ.—Ի հարկէ այդպէս է: Այ, օրինակ քո
երկուսները նշան են, որ դու ամենայեւն

աշակերտուհին ես: Չէ՞ որ քեռին էլ միևնոյն բանն է ասում:

ՍՐԲ.—(քարկացած) Ես մեղաւոր եմ, որ հիւանդանում եմ և դասերից յետ մնում:

ՇԱՀ.—Հիւանդանում... ախր ի՞նչդ է ցաւում ք... ճանապարհին ինձանից արագ էիր վազում:

ՍՐԲ.—Հէնց այդ խօսքերն են, որ ինձ աւելի են հիւանդացնում. դէ որ այդպէս է, վաղըն էլ դպրոց չեմ գնալու, տեսնեմ ի՞նչ պիտի անէք թէ դու, թէ քեռին:

ՇԱՀ.—Ը՛հր՛, այդ էր պակաս. սպասիր գընամ մայրիկին ասեմ (գնում է շտապով):

Տ Ե Ս Ի Լ 6.

Մըբուհի (մենակ)

ՍՐԲ.—Այո, վաղն էլ չեմ գնայ դպրոց: Վաղը շաբաթ է՝ կէնտ օր, կընստեմ տանը, շաբաթ ու կիրակի բաց թողած դասերս լաւ կը սերտեմ, երկուշաբթի օրը կերթամ և պարզ երեսով կերևամ ուսուցիչ-ուսուցչուհիներին աչքին: (Յանկարծ յիշելով) Ա՛խ, մոռացայ. (դուռը քիչ թաց է անում եւ կանչում) Գիքոր, Գիքոր. (յետ դառնալով) Գիքորին ուղարկեմ Վարդանուշին կանչել տամ և բաց թողած դասերս իմանամ:

Տ Ե Ս Ի Լ 7.

Նա եւ Գիքոր

ԳԻՔ.—(ներս մտնելով) Ինձ հետ ե՛ս, պուճուր աղջիկ պարուն ջան...
ՍՐԲ.—Այո: Գիքոր, իմ ընկերուհի Վարդանուշենց տունը գիտե՞ս:

ԳԻՔ.—Ո՛ւմ... էն օր շրջալի կարթում ա...

ՍՐԲ.—Ի՞նչ է անում:

ԳԻՔ.—էն օր գիրը ձեռն առնելուն պէս՝ «ջուր տու քշի» ա անում:

ՍՐԲ.—Վարդանուշենց տուն եմ ասում, ի՞նչ «ջուր տուր քշի», Վարդանուշին չես ճանաչում:

ԳԻՔ.—Հա էլի, էն կչեղակի ճուտին չես ասում:

ՍՐԲ. Ու՛ֆ, դու էլ Շահէնի նման այսօր կատաղել ես:

ԳԻՔ.—Խի՛, ես շուն եմ, որ կատղեմ:

ՍՐԲ.—Ա՛խ Գիքոր, ես ի՞նչ եմ ասում, դու ի՞նչ ես հասկանում. Վարդանուշենց տունը գիտե՞ս, Վարդանուշենց: Այ, էն լաւ կարգացող աղջկայ տունը:

ԳԻՔ.—Դէ ես էլ նրան եմ ասում էլի:

ՍՐԲ.—Դէ որ գիտես, գնա ասա, Սրբուհին քեզ խնդրում է (ժողովրդին). այս բառը մայրիկիցս եմ սովորել:

ԳԻՔ.—Աչքիս վրայ: (Քիչ գնում է, նորից յետ դառնում) Բա որ հարցնի ի՞նչ ա խնդում. ի՞նչ ասեմ:

ՍՐԲ.—«Խնդում է» չեմ ասում, ասա, «խընդրում» է, հասկանում ես՝ «խըն—դրում—է»,

ԳԻՔ.—Ո՞նց թէ «խնդրում է», ես էգ լիզուն հասկանում չեմ:

ՍՐԲ.—Դէ լաւ, գնա—ասա՝ Սրբուհին քեզ կանչում է:

ԳԻՔ.—Օ՛՛ վէ՛, դէ ըտէնց ասա էլի:

ՍՐԲ. Հիմա իմացար:

ԳԻՔ.—Խուլ խօ չեմ: Էնա, կերթամ-կասեմ թէ՛ մեր Սրբումին քեզ կանչում ա, էլի:

ՍՐԲ.—Այ քեզ մարդ, մինչև հիմա իմ անունը չըգիտե՞ս դու, ես Սրբումի՞ եմ, թէ Սըրբուհի:

ԳԻՔ.—Դէ որ ըտէնց ա, պուճուր աղջիկ պարուն ջան, մի թղթակտորի վրայ գլի, տանեմ՝ իրան տամ:

ՍՐԲ. Գի՛ւ-ղա՛-ցի՛... երկու խօսք էլ չես կարողանում ասել (մօտենում է զրքերին, տեսրակից պատռում է՝ մի թերթ եւ սկսում է զրել. առաջին անգամ սխալելով պատռում է, ճխտորում եւ վայր ծգում) Այս չեղաւ, սխալեցի, նորից զրեմ:

ԳԻՔ.—(վերցնելով գետնից ասում է կողմը) Էս մէկ ու Աստուծ...:

ՍՐԲ.—(երկրորդն է գրում, դարձեալ սխալում եւ վայր ծգում) Օ՛հ, այս անգամ անպատճառ ուղիղ եմ գրելու: (նոր թերթ վերցնելով):

ԳԻՔ.—Լաւ, լաւ, բեզարեցիր: Առանց գրելու կասեմ. էրկու խօսքի համար (ցոյց տալով հաւաքածը) էսքան թուղթ պատըռտորեցիր, բա որ մի նամակ ըլես գրելիս, էս տանով մին թուղթ հերիք չի անիլ քեզ: (դուրս է գնում ծաղրելով):

Տ Ե Ս Ի Լ Տ.

Սրբուհի (միայն)

ՍՐԲ.—(նրա յետեւից) Դի՛քոր, Դի՛քոր: (ընդ-սից Դիքորը՝ լաւ լաւ): Այ քեզ ծառայ, ի՞նչ մեծասիրտն է եղել. բայց չէ, այս ամենը Շահէնի սովորեցրածն է: Սպասիր գնամ մայրիկին ասեմ որ Շահէնը ծառային էլ է վրաս ծիծաղեցնում (դուրս է գնում):

Տ Ե Ս ՐԵՐԵՅԻ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԵՍՏՐԱԿԱՆ

ՇԱՀ.—(նրա է մտնում՝ զիրք կարդալով, յետոյ նստում է սեղանի առաջ, մի փոքր ժամանակից յետոյ զիրքը փակում է եւ երկու տուն ոտանաւոր ասում):

Այս էլ վերջացրի. մայրիկն ասում էր՝ սուրճից
 յետոյ կը սովորէք ձեր դասերը, իսկ ես՝ թւա-
 բանութեան խնդիրները դուրսը—պատշգամբում
 լուծեցի, հիմա էլ Հայոց լեզուի անգիրը սովորեցի
 (նախելով դասացուցակին) Հա, բնական պատմու-
 թիւնից նոյն դասն է, աշխարհագրութիւնն էլ
 երէկ եմ սովորել քեռուս մօտ, մնում է Ռու-
 սաց արտագրութիւնն, այդ էլ իսկոյն կը գրեմ և
 սուրճից յետոյ՝ հանգիստ սրտով «Հասկեր» կը
 կարդամ: (սկսում է արտագրել) Օ՛հ, մայրիկն
 ինչու ուշացրեց սուրճը, արդէն քաղցել եմ: Է՛հ,
 էս մի երկու տողն էլ կը գրեմ, յետոյ կերթամ
 սեղանատուն և սուրճի հետ մի լաւ նախաճա-
 ջիկ կուտեմ (Գրելիս կամաց երգում է մի որեւէ
 երգ): Այս երգը մեր պ. Գասպարեանցը շատ է
 սիրում, համարեա թէ նա միշտ այս երգն է
 երգում (ղրտից զանգի ձայն): Այս ով է: (ղուրս
 է գնում եւ իսկոյն նա եւ Սօսը ներս են մտնում):

Տ Ե Ս Ի Լ 10.

Շահէն եւ Սօս

ՇԱՀ.—Ի՞նչ կայ, Սօս, որ շտապել ես մեր
 տուն:

ՍՕՍ.—Շահէն ջան, բոլոր դասերը սովո-
 րել եմ, բայց թւաբանութեան երրորդ խնդիրը
 չը կարողացայ լուծել: Դու լուծէ՛կ ես:

ՇԱՀ.— Ո՞րն ես ասում:

ՍՕՍ.—Երկու վաճառականների խնդիրը:

ՇԱՀ.—Իհնարկէ, էդ խօ մի հասարակ բան է:

ՍՕՍ.—Այո, հասարակ է, բայց մարդ որ
 շըշկւում է, հասարակ բանն էլ է մոռանում:
 Այսպիսի դէպքերի համար է լաւ, որ ամեն մի
 աշակերտ քո քեռու նման մի օգնող ունենայ և
 չիմացածների համար նրան դիմի: Դէ տաս տես-
 նեմ, Շահէն ջան:

ՇԱՀ.—Իսկոյն ասեմ. (խնդիրը կարդում է)
 «Երկու ընկեր վաճառականներ ամսական միջին
 թուով եկամուտ էին ստանում՝ ճօթից 638 ռ.,
 պատրաստի հագուստեղէններից՝ 553 ռ., կօշկե-
 դէնից 435 ռ., մանրուքից՝ 117 ռ., փողի տոկոս
 173 ռ. պէտք է իմանալ՝ նրանցից ամեն մէկին
 տարեկան ինչքան էր ընկնում, եթէ խանութի
 վարձ տալիս էին ամսական՝ 145 ռ., հաշւապա-
 հին՝ 55 ռ., երկու գործակատարներին 75 ռ., երեք
 աշակերտներին 24 ռ., մանր ծախսի 67 ռուբլի»:

ՍՕՍ.—Առաջին հարցը՝ կարծեմ եկամուտ-
 ները պէտք է գումարենք, չէ՞...

ՇԱՀ.—Այո, ահա գումարում եմ. (զումա-
 րում է) վաճառականների եկամուտն է ամսա-
 կան ընդամենը՝ 1916 ռ.

ՍՕՍ.—Յետոյ էլ ծախսը կը գումարենք:

ՇԱՀ.—Այո, այս էլ ծախսը: (զումարում է)

Ուրեմն ծախսուում է ամսական՝ 366 բուրլի:

ՍՕՍ.—Այժմ ի՞նչ անենք, ընդհանուր եկամուտից առաջ հանենք ծախսը և յետոյ բաժանենք, թէ...

ՇԱՀ.—Էլ ի՞նչ թէ, իհարկէ պէտք է հանենք (հանում է). ահա երևաց որ՝ ամեն ամիս վաճառականներին մնում է՝ 1550 ռ.

ՍՕՍ.—Հասկացայ, այժմ՝ այս էլ կը բաժանենք 2 ընկերների մէջ, այնպէս չ'է...

ՇԱՀ.—Իսկոյն ասեմ. 1550: 2-ի կտտանանք 775: Ուրեմն, ամեն մի վաճառականի ամսական ընկնում է 775 բուր.

ՍՕՍ.—Բայց խնդիրը հարցնում է՝ թէ տարեկան ամեն մէկին ճիշդան է ընկնում:

ՇԱՀ.—Այո, եթէ ամսական 775 ռ. է ընկնում, 12 ամսում կ'ընկնի 12 անգամ շատ:

ՍՕՍ.—Ուրեմն բազմապատկէ՞նք 12-ով (բազմապատկում է):

ՉԱՀ.—Պրծաւ, գնաց: Այդ 9300 բուրլին կըլինի նրանցից ամեն մէկի տարեկան եկամուտը:

ՍՕՍ.—Այդ այդպէս: Բայց տեսնո՞ւմ ես, Շահէն, ինչ անխղճութիւն է. նրանցից ամեն մէկը ամսական ստանում է 775 ռ. և յանկարծ հաշւապահին, որ անզաղար թւաբանութեան հետ զործ ունի, վճարում են 55 բուրլի:

ՇԱՀ.—Այդ հօ այդ: Տես է, ասում է՝ երեք

աշակերտի տալիս են ամսական 24 ռ. ուրեմն ամեն մէկին ընկնում է 8 ռ.:

ՍՕՍ.—Խեղճ տղէքը, ի՞նչ անեն այդ 8 բուրլիով: Մենք այդքան միմիայն կօշիկ-կրկնակօշիկ ենք մաշում ամսական:

ՇԱՀ.—Իսկ եթէ պատահում է, որ ծառայութեան ժամանակ աշակերտներից մէկն ու մէկը մի որև հասարակ բան է փչացնում, կամ մի որևէ աման է կոտրում, պրծաւ... համ քոթակում են, համ էլ փչացած առարկայի գինը աշակերտի ոռճիկիցը կտրում... Թէկուզ նրա ոռճիկը մի չնչին վարձ լինի, այդ միևնոյն է խանութպանի համար:

1006 | 29369
ՍՕՍ.—Ճիշտ ես ասում...

ՇԱՀ.—Աչքովս եմ տեսել. մեր հարեանը մի անխիղճ ճօթավաճառ է, շաբաթը երկու անգամ դնգսում է իր զիւղացի աշակերտին, թէ ի՞նչ է, նա զիցուք մի բաժակ է կոտրել, կամ թէ խանութի համար կերակուր տանելիս՝ մի քիչ թափել է ճանապարհին:

ՍՕՍ.—Վայ, վայ, վայ, խեղճ տղայ, Շահէն ջան, էդու գորա, մենք—դպրոցի աշակերտներս, հազար անգամ բախտաւոր ենք:

ՇԱՀ.—Նոր ես իմանում Սօս, ի հարկէ, որ բախտաւոր ենք... բայց թողնենք այդ, դու է՛ն ասա՝ Հայոց լեզուի անգիրը դիտեա:

ՍՕՍ.— Գիտեմ:

ՇԱՀ. Ձեւերով կարող ես ասել:

ՍՕՍ.— Գ. Մանուկեանի պէս:

ՇԱՀ.— Այո, այ տես, այսպէս. (պէտք է ասել մի լաւ ոտանաւոր. ձեւերով, աշխոյժ եւ ոգեւորած. ոտանաւորը վերջացրած՝ դրսից լսում է տիկ. Փառանձեմի ծայնը՝ Շահէն, Շահէն, արի սեղանատուն, սուրճը պատրաստ է):

ՇԱՀ.— Սօս ջան, գնանք մի բաժակ սուրճ խմենք:

ՍՕՍ.— Ձէ, շնորհակալ եմ: Էս ինդրի լուծումը՝ ինձ համար սուրճ էլ է, ճաշ էլ:

ՇԱՀ.— Լաւ, գնանք (ընկնելով Սօսի ձեռքից՝ գնում են):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը ներկայացնում է նոյն սենեակը:

Տ Ե Ս Ի Լ 1.

Գրիգոր եւ Վարդանուհ.

ԳԻՔ.— (Ներս մտնելով, յետեւից մտնում է Վարդանուշը) Սրան ես ասում բարիշնա, (նայում է ղէս ու ղէն). Էս ուր ա գնացել է:

ՎԱՐԴ.— Ձիւնի՞ ինձ խաբում ես, Գրիգոր: (Ժողովրդին) Շատ օյինբազն է:

ԳԻՔ.— Այ քեզ պատիժ: (նայում է սեղանի եւ թախտի տակերին) Ախր Էս ուր գնաց է:

ՎԱՐԴ.— Մինչև անգամ սեղանի և թախտի տակերին ես փնտռում: Ի սէր Աստծոյ, ճիշտ ասա՛ ինձ ո՞վ է կանչել:

ԳԻՔ.— Բարիշնան, մեր Սրբուհի բարիշնան, բա էսքան ասում եմ՝ դեռ հասկացել չեմ:

ՎԱՐԴ.— (ծիծաղելով) Հա, հա, հա, Սրբուհի, եթէ նա է կանչել, ապա ինչո՞ւ տանը չէ: Այ դու օյինբազ, երևի խաբում ես ինձ:

ԳԻՔ. — Խի՛, բա ես մարդ չեմ, որ ինձ հա-
ւատում չես: Էն Աստօծը, էն կանաչ կարմիրը
վկայ, որ Սրբուհին նոր ըստի էր և ինձ ձեր
տուն դարկեց՝ քեզ կանչելու:

Տ Ե Ս Ի Լ 2.

Նոյնք եւ Սրբուհի

ՍՐԲ. — (Ներս մտնելով) Ա՛հ, եկե՛լ ես, շատ
շնորհակալ եմ Վարդանուշ ջան:

ՎԱՐԴ. — Գիտե՞ս ինչ Սրբուհի, ծառան քեզ
սեղանի և թախտի տակերին էր փնտռում, չը-
գիտեմ, ինչի՛ տեղ է դնում քեզ:

ՍՐԲ. — Համա Գիքոր:

ԳԻՔ. — Դէ ի՞նչ անեմ, քեզ մատաղ, ասիր
գնա՛, ես ըստի սպասում եմ, ես էլ...

ՍՐԲ. — (խօսքը կտրելով) Լաւ, լաւ, էլ շատ
մի երկարացնի, գնա՛, մայրիկը կանչում է քեզ:

ԳԻՔ. — Գնամ, բա էլ բան չունե՞ս հրամայելու:

ՎԱՐԴ. — Այ քեզ մարդ:

ՍՐԲ. — Ոչինչ, ոչինչ (Գիքորը գնում է):

Տ Ե Ս Ի Լ 3.

Սրբուհի եւ Վարդանուշ

ՎԱՐԴ. — Ինչո՞ւ էիր կանչել:

ՍՐԲ. — Գիտե՞ս Վարդանուշ ջան, ես վաղն էլ

չեմ կարող դպրոց գալ՝ մայրիկիս կարգադրու-
թեամբ:

ՎԱՐԴ. — Վաղն էլ, ինչո՞ւ:

ՍՐԲ. — Այո վաղն էլ, գլուխս սաստիկ ցա-
ւում է: Խնդրում եմ բաց թողած դասերը մի
թղթի վրայ նշանակիր և ինձ ուղարկիր:

ՎԱՐԴ. — Լաւ, ինչ մի դժւար բան է:

ՍՐԲ. — Շաբաթ և կիրակի օրերին բոլորը
սովորելու եմ, որպէս զի երկուշաբթի օրւանից
կանոնաւոր կերպով դպրոց գամ:

ՎԱՐԴ. — Իմ կարծիքով՝ վաղն էլ կարող էիր
գալ և յայտնել ուսուցիչներին, որ հիւանդութեան
պատճառով դասերդ չես պատրաստել:

ՍՐԲ. — Այո: Բայց մայրիկս ասում է, մի
գուցէ ճանապարհին կմրսեմ, և աւելի կը հիւան-
դանամ:

ՎԱՐԴ. — Դու գիտես: Ինչպէս կամենում է
մայրիկդ՝ թող այնպէս անի:

ՍՐԲ. — Վարդանուշ ջան, այս երկամեակին՝
ի՞նչ թւանշաններ ունես:

ՎԱՐԴ. — Շատ լաւ, իսկի 3 էլ չունեմ: Մին-
չև անգամ աւագ ուսուցիչն ասաց՝ յաջորդ ան-
գամ բոլորը 5-եր կլինեն:

ՍՐԲ. — Եղբայրս էլ այդպէս լաւ է սովո-
րում: (զանգի ծայն) Երանի հիվ է:

ՎԱՐԴ. — Երեի եղբայրդ է:

Տ Ե Ս Ի Լ 4.

Նոյնք եւ Յասմիկ

ԳԻՔ.—(ընտր ընտրով) Հրամեցէք, ըստի
են, հրամեցէք:

ՍՐԲ.—(ընտրի մէջ) Օհօ, Յասմիկն էլ եկաւ,
ի՞նչ լաւ է:

ՅԱՍՄ.—Բարեւ ձեզ: Էս լաւ է, Վարդանուշն
էլ այստեղ է:

ՎԱՐԴ.—Այո. Սրբունին ինձ խնդրել էր:

ՅԱՍՄ.—Ի՞նչ, ինձ որ չի խնդրել, կարծում
ես՝ ներս չի ընդունի:

ՍՐԲ.—Տես թէ ի՞նչ է ասում:

ՎԱՐԴ.—Դէ որ այդպէս է, եկէք թելադրու-
թեամբ զբաղենք. հազիր վաղն էլ Հայոց լեզուից
թելադրութիւն ունենք:

ՅԱՍՄ.—Թէն ես եկել էի Սրբունու հետ մի
քիչ խաղալու, բայց և այնպէս համաձայն եմ թե-
լադրութեամբ զբաղելու:

ՍՐԲ.—Էհ դուք էլ, հազիւ եկել էք, եկէք
գնանք պարտէզ, եղբօրս էլ կը կանչեմ և պահմը-
տոցիկ կխաղանք:

ՎԱՐԴ.—Ոչ, Ժամանակը թանկ է, ինչպէս
ասում է պ. Մինասեանը: Որ այդպէս է, ես
գնում եմ դասերս սերտելու:

ՅԱՍՄ.—Երկուսդ էլ լաւ ասացիք. առաջ

թելադրութիւն անենք, յետոյ էլ գնանք խաղանք:
ՍՐԲ.—Ձեր կամքն է: Ահա ձեզ թղթեր և

մատիտներ, դուք զրեցէք, իսկ ես կթելադրեմ:
ՎԱՐԴ. և ՅԱՍՄ.—(միասին) Համաձայն ենք:

ՍՐԲ.—Ի՞նչ թելադրեմ.

ՎԱՐԴ.—«Գնա, ցուրտ ձմեռ»-ն է մեր դասը:
ՅԱՍՄ.—Կարծեմ այդ չի:

ՎԱՐԴ. Ապա ի՞նչ է, դու ի՞նչ ես ասում:

ՍՐԲ. Նու լաւ: (Գիշորը բաց է անում եւ թե-
լադրում, միանքը զրում են)

Գնա, ցուրտ ձմեռ, խստաւիրտ ծերուկ, (կրկնում)
Քո մէջ չկայ սէր, չկայ զգացմունք (կրկնում է)
Ցնծութիւն, տարփանք, ծիծաղ ու համբոյր:
(կրկնում է)

ՅԱՍՄ. Բաւական է, դեռ այսքանն ուղղենք,
յետոյ կամ կըշարունակենք կամ կըխաղանք:

ՎԱՐԴ.— Տէք ես ուղղեմ:

ՍՐԲ.—Ով որ թելադրեց, նա էլ կուղղի:
(Սրբունին ուղղում է, իսկ Վարդանուշն ու Յաս-
միկը խօսում են առանձին):

ՅԱՍՄ.—Վարդանուշ, ուսերէնը սովորել ես:

ՎԱՐԴ.—Այո, նոյնիսկ մի տուն էլ աւել:

ՅԱՍՄ.—Աւելն ի՞նչացու է:

ՎԱՐԴ.—Այս գիշեր ազատ եմ, մտադիր եմ
միշտ վերջը սովորել:

ՅԱՍՄ.—Դու էլ քեզանից բաներ ես հնարում:

ՎԱՐԴ.—Ի՞նչու, միթէ վատ է շատ բան գիտենալը:

ՅԱՍՄ.—Սպասիր տեսնենք, Սրբունիկն մեր գրածներին սխալներ չաւելացնի:

ՎԱՐԴ.—Ի՞նչեր ես ասում, Յասմիկ...

ՍՐԲ.—(վերջացնելուց յետոյ) Ուղղեցի: Վարդանուշ, դու անսխալ ես գրել, իսկ դու Յասմիկ, երկու սխալ ունես. մէկ որ՝ «ձմեռ» ուայի տեղ «ըէ» ես գրել, մէկ էլ «սէր» — եչով ես գրել:

ՎԱՐԴ.—Այդ հօ՛ ուտելու սեր կնշանակի:

ՅԱՍՄ.—Ոչինչ, այդ երկու սխալն էլ այսուհետեւ կըյիշեմ (նայելով գրածին) և վաղը՝ թելադրութեան ժամանակ՝ սխալ չեմ անի:

ՍՐԲ.—(թղթերը պատառոտում եւ ցած է թափում):

ՎԱՐԴ.—Ի՞նչու ես թափում, սենեակը աղտոտում:

ՍՐԲ.—Ոչինչ, ծառան կըհաւաքի:

ՅԱՍՄ.—Իհարկէ, այդ էլ մեր բանն է, բա ծառան ինչացու է:

Տ Ե Ս Ի Լ 5.

Նոյ՛ք եւ սիկ. Փառանձմէ

ՓԱՌ.— (ներս գալով) Բարե թանկագին հիւրերիս:

ՎԱՐԴ. և ՅԱՍՄ.—Ռեպերանաներով բարեւում են եւ հետու կանգնում):

ՓԱՌ.—Ի՞նչպէս էք, աղջիկներս. անողջ էք, ուսումնարան գնում էք:

ՎԱՐԴ. և ՅԱՍՄ.—Ի հարկ է:

ՓԱՌ.—Շատ լաւ էք անում, ապրիք: Սրբունիկս քիչ տկար է և վաղն էլ չի կարող դըպրոց գալ:

ՍՐԲ.—Ափսոս:

ՎԱՐԴ.— Եթէ պ. դաստիարակը մեզանից հարցնի, մենք կասենք, որ տկար է:

ՅԱՍՄ.—Նա ինչ գործ ունի, կուզեմ կերթամ, կուզեմ ոչ:

ՓԱՌ.—Ձէ, իմ աղջիկն այդպէսներէց չէ, սիրելիք: Նա առանց պատճառի դպրոցից երբէք չի բացակայում:

ՎԱՆԴ.—Յտեսութիւն ձեզ:

ՅԱՍՄ.—Ես էլ եմ գալիս, միասին գնանք:

ՓԱՌ.—Ի՞նչ էք շտապում, սպասեցէք և մի քիչ Սրբունու հետ խօսեցէք:

ՎԱՐԴ. և ՅԱՍՄ.—(միասին) Դասեր ունենք պատրաստելու:

ՍՐԲ.—Մայրիկ ջան, թոյլ տուր սրանց ճանապարհ ձգեմ:

ՓԱՌ.—Գնա՛, միայն շուտ արի: (նրանք գնում են):

Տ Ե Ս Ի Լ 6.

Փառանձեմ (միայն)

ՓԱՌ.—Երանի՛ ձեր ծնողներին. ճիշտ իմ
Շահէնի նման աշխատասէր մանուկներ են, մա-
նաւանդ Վարդանուշ Այամդարեանը: Բայց ինչ
եղաւ Շահէնը, գնամ տեսնեմ, թէ չէ՝ անվերջ
պարապելուց կարող է յոգնել և փառել (գնում է):

Տ Ե Ս Ի Լ 7.

Գիժոր (ներս մտնելով).

ԳԻՋ.—Ա՛յ քեզ օյին, էս ո՛ւր են թռել:
(դէս ու դէն նայելով). Տէր քեզ մեղայ: Էկան-
չեկան, էլ հլա թղթեր պատռտորեցին իմ ջանի
համար. (հաւաքում է) Շտապով տուն եկայ, ասի
կարելիա մի՞րգ ըլեն ուտելիս, մի կամփէտ էլ
ինձ փայ հասնի. համա չէ, քիթս քարին դիպաւ:
(զանգի ձայն) Օհօ էս էլ քեզ թագա մարդ. ա-
մենքն էլ ըսօր են կատաղել: Կասես թէ խօսք
ու մին են արել: Գնամ բաց անեմ, թէ չէ՝ էս
ա, աղջիկ պարունը մինը հագար կըշինի. (զը-
նում է):

Տ Ե Ս Ի Լ 8.

Նա եւ պ. Մինասեան

ԳԻՋ.—(շեմքին) Համեցէք աղայ,
ՄԻՆԱՍ.—Այստեղ է ապրում Սրբուհի Վա-
սակեանը:

ԳԻՋ.—Սրբումի՞ն, հրաման քեզ, աղա:

ՄԻՆ.—Ո՞ւր է նա, տանն է:

ԳԱՋ.—Տանն էր աղա, հմիկ դուրս գնաց:

ՄԻՆ.—Ո՞ւր գնաց:

ԳԻՋ.—Գիտեմ ոչ աղա, համեցէք օթախը,
ես գնամ աղջիկ պարնին իմաց տամ: (գնում է)

Տ Ե Ս Ի Լ 9.

պ. Մինասեան (միայն)

ՄԻՆ.—(ներս մտնելով) Երանի՛ թէ տանը
լինէր Սրբուհին, անձամբ ստուգէի, թէ ի՞նչու
դպրոց չէ գալիս: Երեք օր է դասերից բացա-
կայում է և մեր դաստիարակներին պարտքն է,
այդպիսիների տները գնալ և պատճառը իմանալ:

ՏԵՍԻԼ 10.

Նա եւ Փառանձեմ

ՓԱՌ.—(ներս գալով) Բարեւ ձեզ պարոն,
այս ի՞նչպէս է, որ բարեհաճել էք մեզ մօտ:

ՄԻՆ.—(ըստընկրով) Առանձին ոչինչ, եկել եմ Սրբուհու մասին տեղեկանալու. ահա մի քանի օր է դպրոց չէ յաճախում, չգիտենք ինչն է պատճառը:

ՓԱՌ.—Այո, պարոն, մենք էլ ենք նեղանում նրա բացակայութեան պատճառով, խնդրեմ նստեցէք (աթոռ տալով):

ՄԻՆ.—Շնորհակալ եմ. (նստում է) Ինչո՞ւ է բացակայում, տիկին Վասակեան:

ՓԱՌ.—Տկար է, պ. Մինասեան: Ահա 3 օր է՝ ինչ ջերմում է և ախորժակ էլ չունի:

ՄԻՆ.—Ձեր որդի Շահէնն ինչպէս է սովորում:

ՓԱՌ.—Ոչինչ, բոլոր թւանշանները 5 ու 4 են:

ՄԻՆ.—Ճանաչում եմ, ճանաչում. նա անցեալ տարի իմ աշակերտն էր: Ապրի նա, շատ աշխատասէր և ընդունակ երեխայ է. տիկին, քեռին դարձեալ օգնում է նրան:

ՓԱՌ.—Այո պարոն, ճաշերից յետոյ, դժւար դասերի ժամանակ, գնում է խանութ և քեռուն հարցնում չիմացածները: Ափսոս, որ Սրբուհիս չէ կարողանում այդ անել, որովհետեւ նազ է և երկար մանգալուց ու աշխատելուց սաստիկ յոգնում է:

ՄԻՆ.—Իսկ ո՞ւր է Սրբուհին որ չէ երևում:

ՓԱՌ.—Բժիշկի մօտ է գնացել:

ՄԻՆ. Մենակ:

ՓԱՌ.—Ո՛չ, եղբօր հետ: Ես մի քիչ զբաղւած էի, այս անգամ Շահէնին ուղարկեցի նրա հետ:

ՄԻՆ.—Էհ, որ այդպէս է. խնդրեմ ուշադրութեամբ հետևէք երեխային...

ՓԱՌ.—Իհարկէ, իհարկէ: Պարոն Մինասեան, երեխան շատ է մտածում իր բացակայութեան մասին, միշտ ասում է՝ ընկերուհիներս դասարանը կփոխեն, իսկ ես կը մնամ:

ՄԻՆ.—Շատ իզուր, դեռ առաջին կիսամեակն է, եթէ երկրորդ կիսամեակին կանոնաւոր յաճախի դպրոց և դասերը սովորի, անշուշտ կը տեղափոխւի յաջորդ դասարան:

ՓԱՌ.—Շնորհակալ եմ: Գիտէ՞ք, նա այն էլ է գանգատւում թէ՝ դպրոցական հանգէսների և ներկայացումների ժամանակ՝ իրեն ոչինչ չէք տալիս սովորելու:

ՄԻՆ.—Տիկին, ամեն աշակերտ հօ չէ կարող ոտանաւոր կամ դեր ասել, նախ՝ առանձին ընդունակութիւն և երկրորդ էլ աշխատասիրութիւն է հարկաւոր:

ՓԱՌ.— Ինչպէս:

ՄԻՆ.—Հէնց այնպէս: Մէկը եթէ հազիւ է կարողանում իր դասերը սովորել, միթէ կարե-

լի է նրան ծանրաբեռնել կողմնակի աշխատանքով:

ՓԱՌ.—Այո, իհարկէ, իհարկէ: (մտնում է Շահէնը)

Տ Ե Ս Ի Լ 11.

Նոյնք եւ Շահէն

ՇԱՀ.—Բարեւ ձեզ: (Գլուխ է տալիս եւ մտնում է զարմացած կանգնած):

ՓԱՌ.—(Անհանգիստ է, ուզում է Շահէնին մի բան հասկացնել):

ՄԻՆ.—Ահա և նրանք: Բարեւ Շահէնս, (Շահէնը մօտենում է Մինասեանին եւ նրա պարզած ձեռքը սեղմում): Ի՞նչպէս ես, ի՞նչպէս են անցնում դասերդ:

ՇԱՀ.—Լաւ եմ, շնորհակալ եմ, դասերս էլ լաւ են:

ՄԻՆ.—(Ժխտելով) Դասերդ էլ լաւ են. այ շատ ապրես: Հիմա որ բաժանմունքումն ես:

ՇԱՀ.—Զորքորդ:

ՓԱՌ.—(Բաւականութեամբ) Այո, չորքորդումն է:

ՄԻՆ.—Տիկին. ապա Սրբուհին չեկաւ:

ՓԱՌ.—(Շփոթած, չի հիմնում ինչ պատասխանի եւ նայում է Շահէնին):

ՄԻՆ.—(Շահէնին) Սրբուհին ի՞նչու ուշացաւ:

ՇԱՀ.—Հիմա կը գայ:

ՄԻՆ.—Իսկ ի՞նչ ասաց բժիշկը:

ՇԱՀ.—Ի՞նչ բժիշկ, մայրիկ:

ՓԱՌ.—(զլխով է անում) Այո, բժիշկը:

ՇԱՀ.—Ես բժշկի մօտ չեմ եղել, բժիշկն ինձ ի՞նչ պիտի ասէր. չգիտեմ:

ՄԻՆ.—Քեզ չէ, Սրբուհու համար ի՞նչ ասաւ:

ՇԱՀ.—Նա էլ չի եղել բժշկի մօտ: Նա երբ գնաց բժշկի մօտ, մայրիկ:

ՄԻՆ.—(կանգնելով) Էհէ... տիկին, այս ինչ է նշանակում: Իրողութիւնն ինձանից էլ էք ծածկում: Ահա այդ է պատճառը, որ Սրբուհուն ծովացրել էք և նա այնքան յաճախ բացակայում է դասերից:

ՓԱՌ.—(շփոթած) Ո՛չ, պ. Մինասեան, այդպէս չէ...

ՄԻՆ.—Երանի թէ այդպէս չլինի, բայց էլ ի՞նչ ոչ. փաստը՝ փաստ է: Եթէ ձեր եղբոր ուշադրութիւնն էլ չը լինէր, երեի Շահէնն էլ Սրբուհու վիճակի մէջ կլինէր:

ՓԱՌ.—Բայց նա առողջ է...

ՇԱՀ.—(Միամտութեամբ) Սրբուհին էլ առողջ է:

ՄԻՆ.—Տեսնում էք տիկին, Սրբուհին էլ առողջ է եղել և իզուր նրան հիւանդացնում էք, որի հետեանքն այն է դուրս գալի, որ նա ծու-

լանում է և իզուր տեղը դասերից բացակայում:

ՇԱՀ.—Նա, ճիշտ է, առաջ հիւանդ էր, բայց այսօր՝ նա լաւ է և իր ընկերուհիների հետ մի քիչ առաջ զբօսնելու է գնացել:

ՓԱՌ.—Այո, հէնց էնպէս, մի փոքր ազատ օդ ծծելու:

ՄԻՆ.—(Շահէնին) Ապրիւս աղաս քո ճշմարտախօսութեան համար (տիկին Փառանձեմին), թող առաջ էլ այդպէս ասէիք, միթէ ես ուրախ չէի լինի նրա առողջութեան համար: Ասացէք խընդրեմ, ո՞վ է մեղաւոր այժմ... Երեխաներին կը սիրեն մայրիկ... բայց սիրելու հետ էլ՝ միշտ կը խրատեն, կզգուշացնեն անհաճելի բաներից:

ՓԱՌ.—Ներեցէք, պարոն, վաղն անպատճառ Սրբունուն դպրոց կուղարկեմ:

ՄԻՆ.—Այդ ձեր կամքն է, ինչպէս կուզէք՝ այնպէս արէք. ինձ մնում է, իբրեւ դաստիարակի, մանկավարժական խորհրդին, յայտնել այն ամենն՝ ինչ որ տեսայ և լսեցի: Ցտեսութիւն: (Առաջ է գնում դէպի դուռ, Շահէնը օգնում է դուռը բանալուն, Փառանձեմը մնում է շփոթած, իսկ Մինասեանը դռանը մօտենալուն պէս՝ յանկարծ ներս է մտնում Գիքորը եւ բարձրաձայն հարցնում)

ԳԻՔ.—Ի՞նձ ես կանչում, աղջիկ պարոն:

ՀՀ Ազգային գրադարան



NL0391000

Ջուղերման.—Պատիւ, կոմեդիա 4 գործ, Թարգմ. Գ. Ղա- րազեօղեան	— 50
Թառայեան Ս.—Թաղեաւած կայծեր, դրամա 5 գործ, պատ- կերազարդ	1 25
Թումանեան Յար.—Պօլերա, վոյ. 1 արար,	— 10
Իըսէն.—Հասարակութեան նկարները, դրամա 4 գործ, Թարգմ. Լ. Բարայեան	— 50
Իվանով.—Ըստ յայտարարութեան, վոյեւիլ 1 գործ, Թարգ. Վ. Մանուէլեան	— 40
Լիսիցեան, Ս. Բաջ գինւորներ կօմ. 1 արար,	— 00
Լուկաշեւիչ, Կ.—Մադիկների մէջ, Փանտաստիքական կո- մեդիա մանուկներէ համար 2 արարածով, եր- գերով ու պարերով: Թարգմ. Կ. Թադեանեան	— 12
Կարմիր ծաղիկ, աշակերտական պիէս երեք պատկերով և նոտերով, վոյս, Ս. Գրիգորեան	— 20
Հայկունի.—Կացինք քարին կգտւ, դրամատիքական պատ- կերներ	1 —
Հիւզօ Վ.—Կոնսանի, դրամա 5 գործ, Ֆր. Թարգմ. Յ. Տէր- Գեորգեան	— 60
Մաղաթեան Վ.—Կլոթ-կրօթ, վոյեւիլի մէկ արար	— 25
Մանուէլեան Լ.—Վերածննդաձեր, Դրամա երեք գործողու- թեամբ	— 35
— Դօկտօր երանգ Բօշայեան, կոմեդ 4 գործ,	— 50
Մարքսիով.—Նախ մեան, յետոյ ամուսնացան կամ կենդանի ննջեցեալներ, կատակերգ, 2 գործ, Թարգ. Գ. Աւետեան	— 40
Մեկեր.—Մատթէոսեան Արտաշէս.—Մենք ապագայ ճերտներ ենք, վոյ, մի գործողութեամբ	— 20
Միրզօ.—Դործը գործ է պահանջում, կատակերգ, 3 գործ, Թարգմ. Կ. Զալայեան	— 40
Մօլիէր.—Ժորժ Դանդէն կամ շփոթած ամուսիններ, կա- տակ, 3 գործ, Թարգմ. Գ. Սունդուկեան	— 40
Մօշկուորարիժէ.—Դաշաղ Արսէն, դրամա 3 գործ Թարգմ. Վրաց, Ս. Զապանկարեան	— 20
Յովսէփիսեան Ն.—Դերասան Լիզա, կոմեդիա 3 գործ,	— 30
Շանթ.—«Նա»-ի մարդը, դրամա 5 արար	— 60
Շան-Պարոն.—Աշխէն, դրամա հինգ գործողութեամբ	— 25
Շէկսպիր.—Արքայ Լիր, 5 արար, Թարգմ. Յ. Պան-Մա- սէհեան	— 50
— Ինչպէս կազէր, Թատերգ, 5 արար, Թարգմ. Յ. Պան- Մասէհեան	— 50
— Մակրեթ, ողբերգ, հինգ արար, Թարգմ. Ս. Մալ- խասեան	— 50